Իսկ իշխան Քուրտը, երբ այս հրամանը ստացավ, իսկույն հավաքեց բոլոր քարհատներին և սկսեցին գավիթ շինել Կաթողիկեին կից՝ արևմտյան կողմում, վեց հարյուր իննսունինը (1250) թվի հրաշափառ ու մեծածախս, ինը խոյակներով չորս սյուների վրա, զանազան հորինվածքներով, սև քարով, հրաշալի խաչաձև լուսանցույցներով: Տանիքի վրա տասներկու սյուն, սյուների վրա գդակը, բոլոր քովթարները, գդակի գլխին խաչաթոռը, սրա վրա մարդաչափ երկաթյա խաչ: Սյուների միջև կախված է զարթուցիչ զանգակ:

(Շինարարությունը) ավարտվեց մի տարում՝ յոթ հարյուր (1251) թվին: Ինքն իշխան Քուրտը թողեց մարմնավոր փառքերը, հետևեց անանց փառքին: Գնաց Սևան կղզին, հագավ մենակյացի հանդերձ, եղավ կրոնավոր և վախճանվեց այնտեղ, կենդանացավ Քրիստոսի մոտ: Թաղվեց եկեղեցու գավթում, որ Սուրբ Կարապետի անունով էր, որպեսզի հառնի փառքով ու պսակվի Քրիստոսով: Նրա հիշատակը թող օրհնությամբ լինի: Նրա փոխարեն (իշխան) նստեց նրա Հասան անունով որդին:

ԳԼՈՒԽ ԺԱ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՎԵՐՆԵՐԻ ՈՒ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Փառավորվեց Օհանավանքի հրաշափառ ու գերահռչակ Սուրբ մենաստանը մեծամեծ իշխաններ Վաչեի ու Քրտի ձեռքով, ամեն հոգևոր ու մարմնավոր կարգերով, պաշտամունքով, պատարագներով, սաղմոսերգությամբ և ամեն բարեձևությամբ:

Եվ ահա ամեն մեկը ցանկանում էր շտապել գալ և տեսնել վանքի կարգավորությունը, բազմաթիվ եղբայրների (միաբանների) միաբանությունը: Այս ամեն ուղիղ կարգերը տեսնելիս ամեն ոք ցանկանում էր տալ ինչք ու ստացվածք, բերք, ոմանք՝ այգի, ոմանք՝ հող, ոմանք՝ բերք, ոմանք՝ գյուղ, ոմանք՝ անասուն, ոմանք՝ դրամ, ոմանք՝ իրենց, ուրիշները՝ որդիներին, ոմանք՝ եկեղեցու անոթներ, այլք՝ նյութական հարստություններ: Եվ այսպես հրաշափառորեն մեծացավ փարթամացավ Օհանավանքի սուրբ ուխտը: Իսկ նրանք, որ ինչքեր տվեցին, եկեղեցիների որմերի վրա և գրքերի հիշատակարաններում գրեցին: Ահա դեռևս գոյություն ունեն ու երևում են դեռ արձանագրությունները և պատերի վրա տրված հիշատակարանները, ուստի մենք առնելով դրանք գրեցինք կոնդակի մեջ, թե արձանագրությունները, որ պատերի վրա են և թե գրքերի հիշատակարանները արտագրեցինք: Նրանց, որոնց թվականը արձանագրության վերևում էր, մենք նույնպես վերևում գրեցինք, եթե սկզբում էր, թե սկիզբն էր, թե մեջը, թե վերջը, նույնպես էլ մենք գրեցինք, իսկ որտեղ չկար (թվականը), նույնն էլ մենք չգրեցինք, որպեսզի կարդալով արձանագրությունը և կոնդակը, չհամապատասխանեն իրար, մեզ չանարգեն, ստախոս համարելով մեզ: Իսկ նրանք, որոնք ինչք էին տվել, մենք այն չգրեցինք, որովհետև նրանք կյանքի գրքի մեջ գրված են: Իսկ ինչ որ գրեցինք, կարգով գրեցինք նաև թվականը, որպեսզի հետ ու առաջ չլինի թվականը, այլ ամենը կարգով, թե տաճարի, թե գավթի կարգը ուղղեցինք: Նույնպես նշանակեցինք նաև տեղը, թե այսինչ բանը գրված է այսինչ տեղը, թե գավթում է, թե տաճարում, տեղը նշանակեցինք, որպեսզի կոնդակը ընթերցելիս հեշտությամբ գտնեն պատերին և չվրիպեն: Նաև թեև նկարագրությունը խիստ աշխարհիկ էր ու անհարմար, մենք նույնը գրեցինք, շարադրությունը չփոխեցինք, որպեսզի ընթերցողները մեզ չպարսավեն և իմ աշխատանքը չարհամարհեն: Այլ որպես և էր, նույնպես գրեցինք, որ հետևյալներն են

Տաճարում ավանդատան գլխին

Վեց հարյուր վաթսունհինգ (1216) թվին բարերար Աստծու շնորհներով, ես Վահրամ՝ Եղբայրիկի որդին, և իմ զուգակից Թայիկը այս եկեղեցու շինության սկզբում մեր ամբողջ ունեցվածքը տվինք սրա ծախսի համար, նաև դպրավանքի այգին: Իսկ Սուրբ ուխտի առաջնորդները սահմանեցին, որ ամեն տարեպտույտին երեք օր ժամ նոր եկեղեցիները ճրագալույցին, Զատկին, Հոգեգալստին հանուն մեզ պատարգեն Քրիստոսին՝ մի օր ինձ համար, մի օր Թայիկի, մի օր մեր ամբողջ տոհմի համար: Այս գրության կատարողները թող օրհնվեն Քրիստոսի կողմից, իսկ նրանք, որ կխափանեն ինը եկեղեցիներում, թող դատվեն Աստծուց և նրա բոլոր սրբերից, ամեն: